



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ**

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երևան

27 ապրիլի 2022 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝

Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝

Վ. Գրիգորյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (ներկայացուցիչ՝ Գ. Գևորգյան) դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2022 թվականի ապրիլի 12-ին)՝ խնդրելով.

*«ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ հանդերձ՝ այնքանով որքանով չի նախատեսում հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդությունը մերժելու մասին Դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորություն, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61 և 63 հոդվածներին հակասող և անվավեր»:*

2. Ըստ դիմողի՝ «Վիճարկվող հողվածի Վերաքննիչ դատարանի կողմից տրված նեղ մեկնաբանումը, ըստ որի բողոքարկման է ենթակա միայն հայցի ապահովման միջոցը վերացնելու որոշումը, որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդում և խախտում է դատավարության կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ հայցվորին տրամադրելով իրավունքների պաշտպանության լայն գործիքակազմ, միաժամանակ զրկելով պատասխանողին/երրորդ անձին դատարանի ոչ իրավաչափ դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից»: Մինչդեռ Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանադրաիրավական բովանդակությունը, ըստ դիմողի, «(...) պետք է հանգեցնի նրան, որ վերաքննության կարգով ենթակա է բողոքարկման հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդություն ներկայացնելու կապակցությամբ կայացված դատական ակտը՝ այդ թվում միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը»:

Դիմողը եզրակացնում է, որ «(...) Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ չի նախատեսում հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին Դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունք»:

Վիճարկվող նորմի նման մեկնաբանությունը դիմողի կարծիքով «(...) հանգեցնում է դրա հակասահմանադրականության, մասնավորապես Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը խախտում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով նախատեսված դատական պաշտպանության և 63-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության հիմնական իրավունքները, քանի որ չի նախատեսում հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին Դատարանի որոշման բողոքարկման հնարավորություն»:

Ուսումնասիրելով Օրենսգրքի՝ հայցի ապահովման ինստիտուտի իրավակարգավորումները՝ դիմողը փաստում է, որ «(...) օրենսդիրը լայն հնարավորություններ է տվել հայցվորին, իրավունք տալով հայցել հայցի ապահովման միջոց, իսկ այդ միջնորդությունը մերժելու որոշում կայացնելու դեպքում՝ այն բողոքարկել վերաքննության կարգով, ավելին եթե հայցի ապահովման միջոցը վերացվում է, ապա հայցվորը կարող է նույնիսկ այդ որոշումը բողոքարկել»: Մինչդեռ դիմողի պնդմամբ, «(...) իրավակիրառ պրակտիկայում Օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին տրված նեղ

մեկնաբանման արդյունքում պատասխանողը/երրորդ անձը զրկված են հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին Դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից»: Դիմողը պնդում է, որ «Նման պարագայում, երրորդ անձը զրկված է իր իրավունքների հավասարակշռման հնարավորությունից, իրավունք ունի միայն միջնորդել հայցի ապահովումը վերացնելու խնդրանքով, որի մերժման պարագայում սպառվում է երրորդ անձի իրավունքների պաշտպանության հնարավորությունը»:

Դիմողի կարծիքով՝ «Նման մեկնաբանությամբ հանդերձ Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը չի նախատեսում պատասխանողի/երրորդ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոց՝ զրկելով վերջիններիս համար անբարենպաստ դատական ակտը բողոքարկելու հնարավորությունից»: Իսկ դատական ակտի բողոքարկման իրավունքը, ըստ դիմողի կողմից մեջբերված Սահմանադրական դատարանի դիրքորոշումների, հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր: Հետևաբար՝ դիմողը եզրակացնում է, որ «(...) Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 61 և 63 հոդվածներին»:

Դիմողի պնդմամբ՝ տվյալ դեպքում, ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) բավարարել է հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը, իր միջնորդությունը հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին՝ մերժել, իսկ դրա դեմ բերված վերաքննիչ բողոքի վարույթ ընդունումը մերժվել է: Դիմողը եզրակացնում է, որ «Արդյունքում, Բանկը ստիպված է տևական ժամանակ կրել վնասներ, դրա դիմաց որևէ հակընդդեմ ապահովում չստանալով, քանի որ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, Օրենսգիրքը չի նախատեսում հակընդդեմ ապահովման ինստիտուտը, որի առկայության պարագայում Բանկը կկարողանար ստանալ ապահովում իր վնասների հատուցման համար»:

Ըստ դիմողի՝ «Ակնհայտ է, որ վիճարկվող իրավադրույթը հանգեցնում է Բանկի հիմնական իրավունքների խախտման՝ անհամաչափորեն սահմանափակելով Բանկի արդար դատաքննության իրավունքը, էապես վատ պայմաններ է ստեղծվում Բանկի

համար՝ համեմատած հայցվոր կողմի հետ»։ Դիմողը գտնում է, որ տվյալ պարագայում «(...) կիրառված հայցի ապահովման պատճառով Հայցվորը անհիմն հարստանում է՝ տիրապետում և օգտագործում է Բանկի սեփականությունը, իսկ Բանկը կորուստներ է կրում և չի կարողանում իրականացնել իր իրավունքների պաշտպանությունը Դատարանի հայցի ապահովման միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու միջոցով»։

Հաշվի առնելով կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների վերաբերյալ վերոգրյալ վերլուծությունը և դիտարկելով Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը նշված սկզբունքներին համահունչ՝ դիմողը գտնում է, որ այն իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ հակասում է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին։

**3.** Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը։

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է

ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում: Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ **անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:**

Դիմումով ներկայացված հիմնավորումների շրջանակում դիմողը փաստում է, որ «(...) այդ նորմը *inter alia* պետք է նախատեսի հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ կայացված որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն, անկախ նրանից՝ այդ որոշմամբ բավարարվել, թե մերժվել է հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը: Նշված նորմի հակառակ մեկնաբանությունը, որը տրվել է իրավակիրառ պրակտիկայում, հանգեցնում է դրա հակասահմանադրականության»:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում, մասնավորապես, 2010 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-918 և 2010 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշումներում, անդրադառնալով միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հնարավորությանը, արձանագրել է, որ՝ «... օրենսդիրը տարբերակում է **միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ**, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ **«հետաձգված բողոքարկում»**, և միջանկյալ դատական ակտի **անմիջական բողոքարկում**: Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է և ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն **օրենսդրի հայեցողության շրջանակում է**»:

Համադրելով Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած դիրքորոշումները սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ վարչական դատարանի 2021 թվականի ապրիլի 16-ի «Հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին» որոշումը

չի կասեցնում գործի հետագա ընթացքը, հետևաբար՝ նման միջանկյալ դատական ակտի բողոքարկման կարգի ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է:

Վերոգրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ դիմողի կողմից ներկայացված հիմնավորումները, որոնց համաձայն՝ վիճարկվող դրույթը հակասում է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին, անհիմն են, իսկ դիմումի ընդունումը ենթակա է մերժման դիմումն **ակնհայտ անհիմն** լինելու հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

### Ո Ր Ո Շ Ե Ց .

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



Ա. Խաչատրյան

Վ. Գրիգորյան

Ա. Թունյան

27 ապրիլի 2022 թվականի  
ՍԴԴԿՈ – 28